որից 120 միլիոնը պիտի տրէր Հայաստանին, իսկ ութսունը՝ վրացիներին. դրեց հայկական կորպուսի դոյքերը Երևան փոխադրելու, ինչպէս նաև անդրկովկասեան ընդհանուր դոյքերի բաժանման խնդիրը, կապեր հաստատեց գերման, աւստրիական և թիւրքական ներկայացուցիչների հետ. նշանակեց Պոլսի խորհրդաժողովի անդամներ և այլն:

Բաթումի խորհրդաժողովից յետոյ, Գերմանիայի ներկայացուցիչ զօր. Ֆոն-Քրեսը յայտնեց, որ յունիս 25-ին Պոլսում պէտք է գումարուի մի խորհրդաժողով՝ մասնակցութեամբ Գերմանիայի, Աւստրահունգարիայի, Բուլգարիայի, Թիւրքիայի և կովկասեան հանրապետութիւնների ներկայացուցիչների՝ լուծելու համար Կովկասի և Թիւրքիայի միջև առկախ մնացած բոլոր խնդիրները: Հայ. Ազգային Խորհրդի կողմից այդ խորհրդաժողովին պատուիրակներ նշանակուեցին՝ Ա. Ահարոնեանը, Ա. Խատիսեանը և Մ. Պապաջանեանը: Այս վերջինը, որ մերժում էր դաշնակցականների հետ մտնել կառավարութեան մէջ, դաշնակցականների հետ գնաց Պոլիս, իսկ ապագային, ինչպէս կը տեսնենք, նաև Փարիզ: Յունիս 14-ին պատուիրակութիւնը մեկնեց Թիֆլիսից:

Այս բոլոր աշխատանքները ուշացնում էին կառավարութեան մեկնումը, որ ջղայնութիւն էր առաջ բերում ո՛չ միայն վրացիների, այլ և հայ հասարակութեան մէջ: Երևանից պահանջում էին փութացնել մեկնումը: Այդ նպատակով նոյնիսկ պատուիրակներ եկան Թիֆլիս: Թիֆլիսի մամուլն ու հանրային կարծիքը դատապարտում էին Հ. Ազգ. Խորհրդի ցոյց տուած դանդաղաշարժութիւնը. մեղադրում էին, որ Ազգ. Խորհրդի անդամները չէին ուզում բաժանուել Թիֆլիսից, ինչ որ շատ էլ հեռու չէր ճշմարտութիւնից:

Այս մթնոլորտում Ազգ. Խորհուրդը չէր կարողանում Երևան բերել մէկ վճռական կամք: Իրար յաջորդող նիստերում տեղի էին ունենում բուռն վիճաբանութիւններ, որոնցից պարզ նկատւում էր, որ շատերի համար Երևան գնալը անձնապէս անհանդուրժելի խնդիր էր, որ անձնական նկատումները քօղարկւում էին սկզբունքային առարկութիւններով:

Ի վերջոյ, Երևան փոխադրուելու հարցը կտրուկ կերպով դրուեց Ազգ. Խորհրդի և կառավարութեան յուլիս 13-ի միացեալ նիստում, ուր կուսակցութեանց ներկայացուցիչներն արին իրենց յայտարարութիւնները. Հ. Յ. Դաշնակցութիւնը պահանջում էր, որ Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը ամբողջ կազմով անմիջապէս մեկնեն Երևան: Հայ Ժողովրդական կուսակցութիւնը առաջարկում էր Երևան ուղարկել մի պատուիրակութիւն և կազմել տեղական կառավարութիւն, իսկ Հ. Ազգ. Խորհուրդը, որպէս համազգային մարմին և իշխանութեան աղբիւր, պահել Թիֆլիսում: Սոցիալիստ-յեղափոխականները առաջարկում էին, որ Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը գնան Երևան, կազմեն այնտեղ Հայաստանի տեղական իշխանութիւն, ապա Ազգ. Խորհուրդը վերադառնայ Թիֆլիս ու մնայ, իբրև ընդհանուր ազգային իշխանութիւն: Սոցիալ-դեմոկրատները, որ առաջ կողմնակից էին Երեւան